

ԱՐՊՅ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԾԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱԿՏԻՎ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ

Մայր բուհի գլխավոր մասնաշենքի վերակառուցման աշխատանքներն ընթանում են լայն քափով: Ըստ նախագծի՝ առաջին փուլում նախատեսվում է իրականացնել ծախսակողման թևի ապամոնտաժման և վերակառուցման աշխատանքները: Մասնաշենքի ծախսակողման հատվածում շինարարական ակտիվ եռուգեռի և նախատեսվող այլ աշխատանքների մասին գրուցել ենք ԱրՊՅ վարչական աշխատանքների գծով պրոռեկտոր Կարեն Առուշանյանի հետ: Նրա խոսքով, այս պահի դրությամբ իրականացվել են ծախսակողման հատվածի ապամոնտաժման, ավարտին են մոտենում հիմնապատերի կառուցման աշխատանքները, իսկ առաջիկայում, այսինքն՝ ծնոթանը, նախատեսում են իրականացնել ներքին աշխատանքներ: «Այս շրջանում մենք, ըստ համապատասխան գրությունների և անհրաժեշտության, իրականացնում ենք առաջին մասնաշենքի գույքի բաշխում հատկապես դրա կարիքն ունեցող դպրոցների միջև»- ասում է Կ. Առուշանյանը: ԱրՊՅ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը նշում է, որ, չնայած շենքային պայմանների սղության ներկայիս պայ-



մաններին, ուսումնական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ: Համալսարանն անցել է երկհերթ ռեժիմի, և հաջողվել է լսարանային ֆոնդն այնպես վերաբաշխել, որ ուսումնական գործընթացը չտուժի: «Լսարանային առկա ֆոնդի արդյունավետ օգտագործմամբ մենք կարողացել ենք անկորուստ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ ներգրավելով լսարաններ նաև հանրակացարանի առաջին հարկից»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇԻԻ «ՇՈՂ» ՑԵՐԵԿԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԵՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբերի 5-ին ԱրՊՅ հոգեբանական կենտրոնը ՈՒՇԳՅԱՍ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանի և Գ-1, Գ-2, ՆՄԳ-4, Տ/Կ-4 կուրսերի մի խումբ ուսանողների, մագիստրանտների հետ մագործակցության շրջանակում կազմակերպել է ճանաչողական այցելություն ք. Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոն: Կենտրոնի տնօրեն Դ. Դանիելյանը ծանոթացրել է երեխաների, ծնողների հետ տարվող աշխատանքներին, նրանց սոցիալ-հոգեբանական զարգացման և աղապտացիայի խնդիրներին: Նա իր գոհունակությունն է հայտնել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Ֆիզկուլտուրա և սպորտ» մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրանտ Սամվել Բեգլարյանից, ով կամավոր հիմունքներով անց է կացնում պարապմունքներ ֆիզկուլտուրայից յուրաքանչյուրին ցուցաբերելով անհատական մոտեցում: Նախատեսվում է ԱրՊՅ հոգեբանական կենտրոնի և «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոնի միջև շարունակական համագործակցություն, որի շրջա-



նակներում հոգեբանական կենտրոնին կցված մագիստրանտները, ուսանողները կամավոր հիմունքներով աջակցություն ցույց կտան «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոնի հոգեբանամանկավարժական տարաբնույթ խնդիրներ ունեցող երեխաներին:


ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍ



Օրերս ԱրՊՅ ՆՁՊ մասնագիտության առաջին կուրսի ուսանողներն այցելել են գորամաս, ծանոթացել զինծառայողների առօրյային: Այցելության նախաձեռնող ՆՁՊ և ՖՂ ամբիոնի դասախոս Մավրիկ Գրիգորյանի խոսքով, ուսումնական տարեսկզբին ՆՁՊ մասնագիտության առաջին կուրսեցիների համար կազմակերպվում են այցելություններ տարբեր զորամասեր: «Առաջին այցելությունը սովորաբար նպատակ ունի ուսանողներին ծանոթացնելու զինվորի առօրյային, կենցաղային պայմաններին, զինտեխնիկային, պատվո պահակատանը և այլն»,- ասում է Մ. Գրիգորյանը՝ նշելով, որ «Համագործակցության կանոնադրություն» դասընթացի շրջանակում նրանք պարբերաբար լինելու են զորամասերում՝ տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու համար:

 <p>«ԱՐՑԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ</p> <p>Հիմնադիր «ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ</p> <p>Հրատարակվում է 1994 թվականից</p>	<p>Խմբագիր Զարինե Սառաջյան</p> <p>Մեր հասցեն Մ.Գոշի 5: Դեռ: (047) 94 04 91</p>	<p>Տպաքանակ 400</p> <p>Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում</p>	<p>Իմացիր քո համալսարանի մասին:</p> <p>Այցելիր asu.am կայք:</p> <p>www.asu.am</p>
--	--	---	---

ԱՐՑԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛՏԱՐԱՆ»

№ 07(212) հոկտեմբեր, 2018

ԱՅ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԱՐՊՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 4-ին գումարվել է ԱրՊՅ խորհրդի նիստ, որի ընթացքում խորհրդի կազմի ձայների մեծամասնությամբ ռեկտորի պաշտոնում ընտրվել է Բ.Գ.Ք., դոցենտ Արմեն Յուրիկի Սարգսյանը: Հոկտեմբերի 9-ին ԱՅ պետնախարար, ԱրՊՅ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանը ԱրՊՅ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացրել է նորընտիր ռեկտոր Արմեն Յուրիկի Սարգսյանին:



Անդրադառնալով նախորդ ռեկտորի՝ Մանուշ Մինասյանի գործունեությանը՝ նա մասնավորապես նշել է. «Անցած տարիների ընթացքում ուսման որակի բարձրացման ուղղությամբ Մ. Մինասյանի գործունեությունը, ԱրՊՅ-ի որպես մեր հանրապետության մայր բուհի հանդիսանալու առաքելությունից բխող գործառնությունների իրականացումը, կատարված բարեփոխումները մեր երկրի համար անգնահատելի են: Այդ ժամանակահատվածում ԱրՊՅ-ն պատվով պահպանել է մայր բուհի բարձր պատիվը»: Պետնախարարը ԱրՊՅ խորհրդի, պրոֆեսորադասախոսական, ուսանողական կազմի և անձամբ իր անունից շնորհակալություն է հայտնել Մ. Մինասյանին՝ կատարած աշխատանքների համար:

Շնորհավորելով նորընտիր ռեկտոր Արմեն Սարգսյանին՝ պետնախարարը նշել է, որ Արմեն Սարգսյանը նոր մարդ չէ համալսարանում: Երկար տարիներ առնչվել և ներսից ծանոթ է եղել համալսարանական կրթությանը՝ բուհում զբաղեցնելով տարբեր պաշտոններ: Հաջողություն մաղթելով նոր ռեկտորին, միաժամանակ համոզմունք է հայտնել, որ Արմեն Սարգսյանին կհաջողվի նոր թափ հաղորդել սկսված աշխատանքներին:

ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը և շնորհակալություն է հայտնել Մ. Մինասյանին՝ կատարած դժվար, պատասխանատու և արդյունավետ աշխատանքի համար: Շնորհավորելով Ա. Սարգսյանին՝ նա նշել է, որ փոխնախարարի պաշտոնում տարիների փորձը Ա. Սարգսյանին հնարավորություն կտա նոր տեսանկյուն



ԱՐՊՅ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԻ ԽՈՒՄԲ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅԵՐԻ

Հոկտեմբերի 30-ին ԱրՊՅ ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդունել է մի խումբ սփյուռքահայերի: Պատվիրակության կազմում էին մասնագիտությամբ բժիշկ սիրիահայեր և Գերմանիայում բնակվող բժիշկ, փիլիսոփա Սարգիս Քեհյայանը:



Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթական ոլորտում հետագա համագործակցության առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ Սարգիս Քեհյայանի կողմից բարոյագիտության, փիլիսոփայության թեմաներով առաջիկայում ԱրՊՅ-ում դասախոսությամբ հանդես գալու և նրա՝ բուհական դասընթացի համար նախատեսված նորերս լույս տեսած «Բարոյագիտություն. փիլիսոփայական ակնարկ» գիրքը ուսանողությանը ներկայացնելու հետ կապված հարցեր:

Այդ գիծը նկատեցի նաև Արցախի ժողովրդի մեջ: Հայկական ջիղը շատ զորեղ է արցախցիների մեջ: Անհնար է, որ Արցախի ժողովուրդը որևէ տարածքային զիջում անի. ժողովրդի կամքն է սա: Որևէ իշխանության կողմից ժողովուրդը չի հանդուրժի տարածքային զիջում»:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել հյուրերին՝ Արցախ այցելելու և արցախցիներին մեթոդական աջակցություն ցուցաբերելու համար՝ կարևորելով Արցախ-Սփյուռք կապի ամրապնդումն ու տարբեր ոլորտներում համագործակցության խորացումը:

Սարգիս Քեհյայանը, ով առաջին մասնագիտությամբ բժիշկ է, 1990-ական թթ. ՀՀ-ում և Արցախում բժշկական գործունեություն է ծավալել՝ ցուցաբերելով մասնագիտական օժանդակություն առողջապահության ոլորտի մասնագետներին: Այժմ նա իր երկրորդ՝ փիլիսոփայություն մասնագիտացմամբ պատրաստակամություն է հայտնել առաջիկայում ծրագրով այցելել ԱրՊՅ և բարոյագիտություն թեմայով դասընթաց վարել: Նշենք, որ նա Գերմանիայի Հայոց թեմի հիմնադիր անդամներից է և ավելի քան երկու տասնամյակ վարել է թեմական խորհրդի ատենապետությունը: Դասախոսել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1998 թ. արժանացել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության «Ներսես Շնորհալի» շքանշանի:

Իր հերթին սիրիահայ բժիշկ Մանվել Իսկանդարյանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Արցախից ու Արցախի ժողովրդից ստացած իր տպավորություններն է կիսել. «Արցախի ժողովուրդը տեղ է իր երկրի ամեն մի հատվածին, և ամեն մեկը պատասխանատվությամբ է վերաբերվում իր աշխատանքին: Կազմակերպվածություն նկատեցի բոլոր ոլորտներում՝ սկսած հյուրանոցից ու ոստիկանությունից: Սփյուռքում տարիներ շարունակ զբաղված ենք հայապահպանությամբ, և ազգային ջիղը զորեղ է սփյուռքահայության մեջ:

ԱՐՊՅ-ՈՒՄ ԴԱՍԱՆՈՒՄՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԳՐՈՂ, ՄԱՏԵՆԱԳԵՏ ՀՈՎՍԵՓ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ



Հոկտեմբերի 2-ին ԱրՊՅ-ում հյուրընկալվել և դասախոսությամբ հանդես է եկել ամերիկաբնակ հայ գրականագետ, մատենագետ, թարգմանիչ, հրապարակախոս, Հայաստանի և Արցախի գրողների միությունների անդամ, ազգային - հասարակական գործիչ Հովսեփ Նալբանդյանը:

հայապահպանության խնդիրներին՝ կարևորելով ազգային մշակույթի, մայրենի լեզվի և հայ գրքի ու գրականության դերն առհասարակ այդ գործում: Բազմաթիվ են նրա բարեգործական ծրագրերը՝ հայ գրքի տարածման գործում: Հովսեփ Նալբանդյանը խոստովանել է, որ գիրքը տարածելը, արժեւորելը համարում է իր հիմնական աշխատանքը:

«Արցախը Հայաստանի անբաժան մասն է: Եվ ես առանց Արցախ այցելելու չեմ կարող: Ամեն անգամ նոր գրքերով եմ ներկայանում Արցախի ուսանողությանը՝ նրանց նոր գիտելիքներ և տեղեկություններ տալու նպատակով: Արցախն ինձ հզոր լիցքեր է տալիս և ամեն անգամ Արցախ այցելելով՝ ստեղծագործական մեծ եռանդով եմ վերադառնում ԱՄՆ: Այսօր Սփյուռքում հայապահպանումը ծանր վիճակում է: Այս խնդիրը հետզհետե ավելի է ծանրանում: Նման իրավիճակում չափազանց կարևոր են համարում հայրենիք - սփյուռք կապի ամրապնդումն ու փոխգործակցության խորացումը տարբեր ուղղություններով», - նշել է նա:

Ուսանողների հետ հանդիպման ընթացքում Հ. Նալբանդյանը ներկայացրել է իր նոր լույս տեսած «Միջազգային պատմություն. Ժամանակագրություն» և «Սփյուռքահայ պատմվածք» գրքերը: Բանախոսը պատասխանել է նաև ուսանողների հարցերին:

Հ. Նալբանդյանը բանասիրական ֆակուլտետում հանդես է եկել «Արդի հայկական սփյուռքը և սփյուռքահայ գրականությունը» թեմայով դասախոսությամբ: Սփյուռքում ապրող և ստեղծագործող մտավորական իր դասախոսությունը նվիրել է առավելապես սփյուռքահայության ներկայիս վիճակին,

ՀՖԿՍՊԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՊՅ-ՈՒՄ ԷՐ

Հոկտեմբերի 26-ին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողական խորհրդի պատվիրակությունը ճանաչողական այցով ԱրՊՅ-ում էր:



ԱրՊՅ ուսանողական կառույցների անդամները դիմավորել և հյուրընկալել են գործընկեր բուհի պատվիրակությանը, ծանոթացրել համալսարանական պայմաններին և ուսանողական առօրյային:

ԱրՊՅ ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ողջունելով ուսանողներին, կարևորել է միջբուհական համագործակցությանն ուղղված քայլերը՝ հույս հայտնելով, որ այդպիսի գործնական բնույթ կկրեն:

է նա: Հանդիպումից հետո ուսանողներն այցելել են Արցախի պատմամշակութային վայրեր:

«Այսպիսի հանդիպումները երկու բուհերի համագործակցության առումով քայլեր են ամրապնդելու և նոր թափ հաղորդելու առկա գործակցությանը: Մեր կողմից կարևորվում են ֆորմալ և ոչ ֆորմալ փոխայցելությունները ինչպես բուհերի ղեկավարության, այնպես էլ ուսանողական ինքնավար կառույցների մակարդակով», - ասել է

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱրՊՅ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողները պարբերաբար մասնակցում են մարզական տարաբնույթ միջոցառումների՝ գրավելով առաջնակարգ տեղեր և բարձր պահելով հանրապետության ու մայր բուհի անունը:

ՖԴ և ՆՁՊ ամբիոնի պատասխանատուների ուշադրությունից դուրս չեն մնում մարզական միջոցառումների և մրցաշարերի մասնակցությունն ու կազմակերպումը: Ինչպես տեղեկացնում է ՖԴ և ՆՁՊ ամբիոնի վարիչ Սուսաննա Հայրապետյանը, համալսարանի ուսանողները մարզական ոլորտում պարբերաբար հաջողություններ են արձանագրում: Նախորդ ուսումնական տարում ՖԴ և ՆՁՊ մասնագիտության ուսանողները թեթև աթլետիկայից մասնակցել են Սեյրան Հարությունյանի հուշամրցաշարին: ՆՄՀ առաջին կուրսի ուսանողուհի Ռուզաննա Մելքունյանը (100 մետր մրցավազք), ՆՁՊ երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Արզումանյանը (գնդի հրում), գրավել են երկրորդ մրցամակային տեղեր: Թեթև աթլետիկայից ԱՀ առաջնությանը ԱրՊՅ ուսանողները ցուցաբերել են փայլուն արդյունքներ. 800 և 1500 մետր մրցավազքում առաջին տեղ է գրավել ՖՍ առաջին կուրսի ուսանող Արման Հակոբյանը, 400 մետր մրցավազքում՝ երրորդ, իսկ հեռացատկից՝ երկրորդ տեղ է զբաղեցրել ՖՍ առաջին կուրսի ուսանող Մխիթար Դանիելյանը, 100 մետր մր-

ցավազքում երրորդ տեղ է զբաղեցրել ՖՍ առաջին կուրսի ուսանող Արա Առաքելյանը: Առաջնությանը տղաները մասնակցել են մարզիչ Ա. Առստամյանի գլխավորությամբ: ԱրՊՅ ուսանողները պատվով են ներկայացրել Արցախն ու մայր բուհը նաև Հայաստանի Հանրապետությունում: Չյուր մարզածկից ՀՀ 19-րդ ուսանողական խաղերում մրցանակային առաջին տեղը զբաղեցրել է տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող Արման Ավանեսյանը (մարզիչ՝ Ս. Հայրապետյան): ՖՍ առաջին կուրսի ուսանող Արման Հակոբյանը ՀՀ-ում կայացած Գառնիկ Դուկասյանի մրցաշարում 800 մետր մրցավազքում զբաղեցրել է երկրորդ տեղ, 4 400 մետր էստաֆետայում՝ երրորդ տեղ, ՖՍ առաջին կուրսի ուսանող Մխիթար Դանիելյանը՝ երկրորդ տեղ: Նույն մրցաշարում գնդի հրում մարզածկից համապատասխանաբար երկրորդ և երրորդ տեղեր են գրավել ՆՁՊ երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Արզումանյանը և ՖՍ առաջին կուրսի ուսանողուհի Արևիկ Հակոբյանյանը: ՀՀ թեթև աթլետիկայի չեմպիոնատում ևս բաժնի ուսանողները աչքի են ընկել իրենց մարզական պատրաստվածությամբ. մրցանակային երկրորդ տեղեր են զբաղեցրել ՆՄՀ առաջին կուրսի ուսանողուհի Ռուզաննա Մելքունյանը՝ 4 400 մետր էստաֆետայից և ՆՁՊ երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Արզումանյանը՝ գնդի հրումից: 800 և 1000 մետր մրցավազքի արդյունքներով ՖՍՍ չորրորդ կուրսի ուսանող Էդվին Հայրապետյանը հայտնվել է երրորդ հորիզոնականում: Մասնակցությունը Ռոբերտ Էմմիլյանի կավաթին ևս անարդյունք չի մնացել. ՆՁՊ երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Արզումանյանը գնդի հրում մարզածկից զբաղեցրել է երկրորդ տեղը:

«ԱրՊՅ ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև 18-րդ ուսանողական խաղերում՝ ֆուտբոլ մարզածկից տղաների հավաքական թիմում, ինչպես նաև Բուլղարիայում կայացած Բալկանյան երկրների չեմպիոնատում, - ասում է ամբիոնի վարիչ Սուսաննա Հայրապետյանը՝ նշելով, որ միջոցառումներն այսպես կամ այնպես սահմանափակվում են: Առաջիկայում նախատեսվում են կազմակերպվել միջֆակուլտետային մրցաշարեր ֆուտբոլից, հրաձգությունից, սեղանի թենիսից, շախմատից»:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ



Հոկտեմբերի 8-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ բաժնի առաջին կուրսի ուսանողները «Ֆինանսական շուկաներ» դասընթացի շրջանակներում կազմակերպել էին ընթերցումներ՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին:

Միջոցառման ընթացքում ուսանողներն ամփոփ ներկայացրել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տնտեսությունները՝ ըստ փուլերի՝ նշելով սոցիալ-տնտեսական դրությունն ու ըստ այդմ՝ տնտեսական առաջնահերթությունները: Դասընթացավար Արևիկ Ալեքսանյանը նման միջոցառումները կարևորում է ինչպես ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու, այնպես էլ այն ներկայացնելու տեսանկյունից: «Բացի այն, որ ֆինանսահաշվային ամբիոնը որդեգրել է առանձին դասընթացներ ընթերցումների ձևաչափով ամփոփելու քաղաքականություն, կարևոր ենք համարում նաև ուսանողներին հրապարակային ելույթների նախապատրաստելը»: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանն ու ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Նարինե Ավանեսյանն իրենց հերթին ողջունեցին առաջին կուրսեցիներին նման միջոցառումներում ընդգրկելու նախաձեռնությունը՝ կարևորելով դրանց արդյունավետությունը:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԴԵԿԱՆՆԵՐԸ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

Համաձայն ԱրՊՀ-ում գործող ներքին կանոնակարգերի՝ արդեն մի քանի տարի է, ինչ դեկանները կատարած աշխատանքների հաշվետվությունը ներկայացնում են ֆակուլտետի մեծ խորհրդում: 2017-2018 ուստարվա առաջին հաշվետվությունը, որին ներկա էր նաև համալսարանի ղեկավարությունը, տնտեսագիտության ֆակուլտետում անցած ուսումնական տարում կատարված աշխատանքների մասին էր:



Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը ներկայացրեց ֆակուլտետի գործունեության ուղղություններն ու ըստ այդմ՝ իրականացված աշխատանքները, որոնց հիմքում դրված էր ուսումնական գործընթացի բարելավման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման սկզբունքը: «Կարևորելով ԱՀ տնտեսությանը որակյալ կադրերով ապահովման խնդիրը՝ ֆակուլտետը պարբերաբար արդիականացնում է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով ֆակուլտետի զլխավոր նպատակին, այն է՝ հանրապետության հանրային և առևտրական ոլորտներում ֆինանսաբանկային, հաշվապահական, հարկային և վերլուծական ծառայությունների, տնտեսվարող սուբյեկտների և կառավարչական ենթակառուցվածքների համար բարձր որակավորված մասնագետներ պատրաստելը, ովքեր ընդունակ կլինեն հարմարվելու շուկայական միջավայրի

արդի պահանջներին», - նշել է Ռ. Մանգասարյանը: Ֆակուլտետի ուսանողներն արձանագրել են մի շարք հաջողություններ գիտական հրապարակումների ուղղությամբ: Մերի Ջաբարյանի հետազոտությունը արժանացել է մրցանակի, և հեղինակին նշանակել են «Իսախան Իսախանյանի» անվան կրթաթոշակ, առանձնացել են Անգելինա Նասիբյանի և Արևիկ Պետրոսյանի հետազոտությունները: Դեկանն անդրադարձել է նաև ֆակուլտետի դասախոսական և ուսանողական կազմի ձեռքբերումներին, նրանց նախաձեռնությամբ իրականացվող տարաբնույթ միջոցառումներին, մասնագիտության հանրայնացման և պրոֆեսորադասախոսական կազմին գիտահետազոտական նախագծերում ներգրավելու հարցերին, ֆակուլտետի զարգացման հեռանկարին: Նշենք, որ նախատեսվում են հաշվետվություններ նաև մյուս ֆակուլտետներում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՀԵՏ. ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդունել է հայազգի օտարազգի անվանի գրող, Պաղովայի համալսարանի պրոֆեսոր Անտոնիա Արսլանին և Նյու Յորքի Սանհեթթենվիլ քոլեջի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան, փիլիսոփայության պրոֆեսոր Շվոն Նաշ - Մարշալին: Հանդիպմանը քննարկվել են կրթական դաշտում հետազոտական գործակցությանն առնչվող հարցեր, նախաձեռնվել անելիքներ:



Ողջունելով հյուրերին և շնորհակալություն հայտնելով Արցախ այցելելու համար՝ ԱրՊՀ ռեկտորն ընդգծել է նրանց հայապատկան գործունեությունը և պատրաստակամությունը հայտնել համագործակցությունը հետագայում ևս շարունակելու՝ կրթական տարբեր ձևաչափերով: Անդրադառնալով նախօրեին կայացած Շվոն Նաշ-Մարշալի «Հայերի մեղքը» գրքի շնորհանդեսին՝ ռեկտորը կարևորել է հայոց ցեղասպանությանը նվիրված հեղինակի աշխատությունն ու նրա արժեքը՝ նշելով. «Վստահ եմ, որ այդ գիրքը գրելիս Դուք Ձեզ հայ եք զգացել: Բարձր եմ գնահատում Ձեր իմացությունների լայն հորիզոնը և այն մարդասիրական աշխատանքը, որ ծավալում եք գիտակրթական գործին զուգահեռ, ինչը տեսանելի է նաև Արցախում»: Կարևորելով Անտոնիա Արսլանի գրականագիտական գործունեությունն ու հայոց պատմությունը գեղարվեստական գրականության միջոցով հանրահռչակելու և միջազգային հանրությանը իրազեկ

դարձնելու առաքելությունը՝ ԱրՊՀ ռեկտորը նշել է. «Ընթերցելով Ձեր «Արտույտների ազարակը» գիրքը՝ համոզվում եմ, որ որքան էլ այդ գրքում հայրենասիրություն եք դրել, այն չէք հասցրել ազգայնամոլության: Գիրքը մարդասիրական շնչով է հագեցած: Ընթերցողը ատելությամբ լցվում է ոչ թե թուրք ժողովրդի հանդեպ, այլ՝ ցեղասպանությունը կազմակերպած թուրքերի հանդեպ»: Շվոն Նաշ-Մարշալը իր հեղինակած գրքերից նվիրել է Արցախի մայր բուհին, իսկ Անտոնիա Արսլանը իր թարգմանությամբ լույս տեսած Դանիել Վարուժանի պոեզիան ամփոփող գիրք և Պաղովայի համալսարանի կողմից հայ ու իտալացի ժողովուրդների բարեկամությունը հավաստող խորհրդանշական նվեր է հանձնել ԱրՊՀ ռեկտորին: ԱրՊՀ ռեկտորն իր հերթին գրքեր, խորհրդանշական նվերներ է հանձնել հյուրերին:

ԱՐՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ



Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի և ԱրՊՀ համագործակցության շրջանակում հոկտեմբերի 29-ից Արցախի մայր բուհում մեկնարկվել է հոգևոր անվտանգության թեմայով դասընթաց, որը տևել է մեկ շաբաթ: Դասընթացին մասնակցել են համալսարանի բոլոր ֆակուլտետներից ուսանողները: Դասընթացավար Լորիս սարկավազ Անդրեասյանը, կարևորելով ծրագրի դերը երիտասարդության շրջանում հոգևոր, ազգային արժեքները սերմանելու և ամրապնդելու հարցում, նշել է, որ նման ծրագիր իրականացրել են նաև հա-

յաստանյան բուհերում, որը սովել է գոհացուցիչ արդյունք. «Ուսանողները հետաքրքրվածությամբ են լսում սուրբգրային մեկնաբանությունները: Դասընթացի բոլոր թեմաների հիմքում ընկած են լինելու սուրբգրային պատումները: Նպատակ ունենք ավելի ակտիվացնել տեղի երիտասարդությանը՝ հոգևոր, կրթական միջոցառումներ ձեռնարկելու ծանապարհին: Ընդհանրապես, հոգևոր թեմաներով քննարկումներ ծավալելու և Աստուծո խոսքի քարոզչության, Սուրբ Գրքի մասին խոսելու կարիք կա բոլոր հաստատություններում: Դասընթացից մեր ակնկալիքն այն է, որ ուսանողը մոտենա Աստուծուն, քանի որ հոգևորականի ծառայության զլխավոր առաքելությունը հոգեփրկությունն է»: Ողջունելով նման ծրագրի իրականացումը Արցախի պետական համալսարանում՝ ՈՒՇՅՅՏԱ գծով պրոռեկտոր Վ.Յարամիշյանը կարևորել է արդի աշխարհաքաղաքական պայմաններում հոգևոր անվտանգության դերը ուսանողության շրջանում: «Դասընթացները ներառելու են արժեքային և ուղղորդիչ հանդիսացող, ինչպես նաև ազգային այն մոտեցումները, որոնք աստվածաշնչյան հոգևոր մեկնաբանության կարիք ունեն», - նշել է Վ.Յարամիշյանը՝ հավելելով, որ ծրագրի շրջանակներում անդրադարձել են այնպիսի թեմաների, ինչպիսիք են ազատության, երջանկության, բարության քրիստոնեական ընկալումները:

ԿԱՅԱՑԵԼ Է ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏ



Հոկտեմբերի 12-ին կայացել է ԱրՊՀ ռեկտորատի նիստ, որը վարում էր ռեկտոր Արմեն Սարգսյանը:

Օրակարգի առաջին հարցը, որը վերաբերում էր առաջին ընթացիկ ստուգման նախապատրաստական աշխատանքներին, ներկայացրեցին ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գ. Գասպարյանը և ֆակուլտետների ղեկավարները:

Ստորաբաժանումների 2017-2018 ուս. տարվա հաշվետվությունների ներկայացման մասին տեղեկություն է հաղորդել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը:

Ամբիոնների վարիչներին հանձնարարվել է մինչև հոկտեմբերի 31-ը ղեկավարներին տրամադրել 2017-2018 ուս. տարվա հաշվետվությունները՝ վերջնական տեսքով Գ. Սահակյանին ներկայացնելու համար:

ՌԷԿՏՐԱՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը տեղեկատվություն է ներկայացրել «Լավագույն ուսանող» մրցույթի կազմակերպման աշխատանքների մասին: «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի ներբուհական փուլը նախատեսվում է անցկացնել մինչև սույն թվականի նոյեմբերի 17-ը:

Ուսանողների միջազգային օրվա առթիվ նախատեսվող միջոցառումների մասին տեղեկատվություն ներկայացրեց ՌԷԿՏԱ և կարիերայի

բաժնի պետ Կարեն Սեժլումյանը: Համալսարանի կայքէջի թարմացման աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացրեց լրատվության և ՀԿ բաժնի պետ Զ. Սառաջյանը: Ըստ տեղեկատվության՝ ամենօրյա թարմացումներ են կատարվում «Նորություններ» և «Ուսանողական էջ» բաժնիներում, որոնք տարածվում են նաև Facebook սոցիալական ցանցում:

Գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վ. Ավանեսյանը տեղեկատվություն ներկայացրեց «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հոդվածների ժողովածուի հրատարակման ընթացքի մասին:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, խոսելով ներքին կանոնակարգերի համալրման աշխատանքների մասին, նշել է, որ ամերիկացի է կատարել խմբագրական աշխատանքներ և կանոնադրություններ ուսումնասիրելու նպատակով դրանց էլեկտրոնային տարբերակները հասանելի դարձնել գիտխորհրդի բոլոր անդամներին:

Այնուհետև քննարկվել են ուսանողների դիմումներն ու ղեկավարների ներկայացումները, որոնց վերաբերյալ ռեկտորը տվել է համապատասխան հանձնարարականներ:

Այլ հարցերում խոսվել է ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կողմից անցկացվող հարցման, այլ բուհերից կամ ուսուցման մի համակարգից այլ համակարգ տեղափոխվող ուսանողների համար առարկայական տարբերությունները կազմակերպելու գործընթացում փոփոխություն կատարելու և այլ հարցերի մասին: Խոսելով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների մասին՝ ԱրՊՀ ռեկտորը կաևորել է թեզերի թեմաների ճիշտ ընտրությունը: Անդրադառնալով խնդիրներին՝ ռեկտորը առանձնացրել է դասատապալումների հարցը: Ֆակուլտետների ղեկավարներին հանձնարարվել է ամհարզելի պատճառներով բացակայող դասախոսներից պահանջել գրավոր բացատրություններ և ներկայացնել ռեկտորատ:

ԱՅՍՈՒՐԵՏ ԱՐՊՀ ՌԻԱԼՆՈՂՆԵՐԸ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԿԱՏԱՆԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱրՊՀ ղեկավարության և «Արցախբանկ» ՓԲԸ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ուսանողների կրթաթոշակն այսուհետ կտրամադրվի սպասարկման վճար չունեցող բանկային պլաստիկ քարտերի միջոցով: Քարտերը տրամադրվում են անվճար, արտոնյալ պայմաններով», - նշել է նա:



ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐՆ ԱՐՊՀ-ՈՒՄ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԳՐՈՂ-ԸՆԹԵՐԳՈՂ ՀԱՆԴԻՊՄԱՄԲ

Գրադարանավարի օրվա առթիվ ԱրՊՀ գիտական գրադարանը նախաձեռնել էր «Գրողը և ընթերցողը» խորագրով միջոցառում:

Հանդես գալով բացման խոսքով ԱրՊՀ գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանը անդրադարձել է օրվա խորհրդին, արժևորել գրքի և գրադարանի դերն ու նշանակությունը:

«Գրադարանավարի օրվա խորհուրդը գրքի արժևորումն է, ուստի պատահական չէ, որ այսօր նախաձեռնել ենք հանդիպում գիրք ստեղծողի և այն սպառողի միջև. գրողի և ընթերցողի միջև երկխոսությունը գրքի և ընթերցանության մասսայականացման լավագույն միջոցը կարող է լինել», - ասել է գրադարանի պատասխանատուն: Հանդիպմանը հրավիրված տարբեր սերնդի գրողների, գրականագետների, գրադարանավարների, ուսանողների և ընթերցասեր հասարակության միջև ծավալված քննարկում - բանավեճն ընթացավ մի քանի ուղղությամբ, որի առաջնություն տևական ժամանակ թե գրողին և թե ընթերցողին հուզող հարցեր էին, թե որտեղ է սկսվում և ավարտվում գրողի ու ընթերցողի ժամանակը, ինչպես են ազդում տեղեկատվական տեխնոլոգիաները գիրք ընթերցելու վրա, տպագիր, թե էլեկտրոնային գրականություն, գրքի մասսայականացում և այլն:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանը, որ գրքի ավանդական տպագիր, տարբերակի կողմնակիցներից է, գտնում է, որ գիրքը ազդի դիմագծի բաղկացուցիչներից է, և այսօր ստեղծվող գրականությամբ է վաղը տրվելու այս սերնդի դավանած արժեքների գնահատականը:

Նորել Գասպարյանը խոստովանեց, որ ստեղծվող գրականության քանակական կողմը երբեք չի գրավել նրան: «Կար ժամանակ, երբ ինքս ինձ հարց էի տալիս արդյո՞ք գրքի ժամանակն է, արդյո՞ք այն, ինչ ես եմ ստեղծում, պետք է: Եվ այս հարցերի պատասխանը գտնելու համար ինձնից ավելի քան յոթ տարի պահանջվեց, - ասում է գրողն ու հա-



վաստիացնում, - այո՛, գրքի և գրականության պահանջ բոլոր ժամանակներում էլ կա»:

Ինչպես նպաստել գրքի մասսայականացմանը և ի՞նչ միջոցառումներ կազմակերպել այս ուղղությամբ հարցի պատասխանը միանշանակ էր. հեղինակը և ընթերցողը պարբերական հանդիպումների և շփումների կարիք ունեն: Գրողներից Կիմ Գաբրիելյանը գրական դաշտի բացթողում է գտնում գրաքննադատության բացակայությունը՝ նկատելով. «Մենք գրքից չենք հեռացել, մեզ հեռացրել են, և սա այն պատճառով, որ գրաքննադատությունը չի ուրվագծում գտարյուն գրողին խոստանից»:

Հանդիպման ընթացքում հրավիրված գրողները Սոկրատ Խանյանը, Նորել Գասպարյանը, Կիմ Գաբրիելյանը, Համլետ Սարտիրոսյանը, Զինաիդա Բալայանը, Սիեր Հարությունյանը, Տաթևիկ Սողոմոնյանը, Վլիսա Բաղդասարյանը, Հերմինե Ավագյանը, ներկայացրին իրենց ստեղծագործություններից և գրքեր նվիրեցին գրադարանին:

ԱՐՊՀ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՆՇԵԼ ԵՆ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ



ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ղոցնետ, Կ.Գ.Ք. Լուսինե Ղարախանյանի նախաձեռնությամբ հոգեկան առողջության համաշխարհային օրվա կապակցությամբ կազմակերպվել էր կլոր սեղան-քննարկում:

Նպատակ ունենալով հասարակության ուշադրությունը հրավիրել հոգեկան առողջության հիմնախնդիրների վրա՝ կլոր սեղանի մասնակիցները նախ լսել են Լ. Ղարախանյանի՝ օրվա խորհրդին համահունչ բանախոսությունը, որով անդրադարձել է հոգեկան առողջությունը խթանող, ապա և խանգարող գործոններին, ինչպես նաև դրա չափանիշներին ու խնամքի կանոններին: Լ. Ղարախանյանի խոսքով, մեր օրերում հոգեկան

առողջությունը նույնչափ խնամք է պահանջում, որքան ֆիզիկական առողջությունը, քանզի երկրորդը պայմանավորված է առաջինով: Այս գիտակցության բացակայության արդյունքում է, որ հասարակությունը հայտնվել է ռիսկային գոտում: Համրային դեպքերն ու իրադարձությունները, տեղեկատվական հոսքերը, մշակութային տոտալ հարձակումները, սոցիալ-տնտեսական իրադրությունը հանգեցնում են վարքային անորոշության, իսկ այնտեղ, որտեղ զերակա է անորոշության ֆոնը, կենսական կայուն դրսևորումները բացակայում են:

«Մեր և հոգեբանական կենտրոնի՝ հատկապես չափահասների շրջանում ցայսօր կատարած համատեղ աշխատանքների արդյունքում կարող ենք փաստել, որ մեր հասարակությունում կա հոգեկան առողջության պահպանման խնդիր և ճգնաժամային երևույթներ, որոնք նույն այդ իներտության և դիֆուզ պատասխանատվության արդյունք են», - ասում է հոգեբանը և իրավիճակի բարելավման ուղիները տեսնում քաղաքացիական պատասխանատվության, ակտիվ կենսագործունեության և հանրային ծառայությունների լուսաբանման մակարդակներում:

Մասնակիցները անդրադարձել են նաև հոգեկան առողջության չափանիշներին և խնդիրներին, առօրյա և զլոբալ սթրեսներին ու դրանց հաղթահարման ուղիներին, որոնք ոչ միայն մասնագետների, այլև հասարակության լայն շրջանակների մտահոգության առարկան պիտի լինեն:

«ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՍՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՈՏ 180 ՈՒՍԱՆՈՂԻ ԳՐԱՆՑԵԼ ԵՆՔ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՂ»։ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոկտեմբերի 7-ը գրադարանավարի օրն է: Օրն առիթ է՝ մեկ անգամ և խոսելու գրքի արժեքի, գրադարանի դերի մասին: «Արցախի համալսարանը»-ը զրուցել է ԱրՊՀ գիտական գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանի հետ:



-Տիկի՛ն Հարությունյան, նախ շնորհավորում ենք Ձեզ՝ մասնագիտական օրվա առթիվ: Թվում է՝ տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակներում գիրքը երկրորդ պլան է մղվել: Ըստ Ձեզ՝ այսօրվա երիտասարդությունը ընթերցասե՞ր է:

Ընթերցող չեն դառնում, այսինքն՝ դա նպատակ չէ, որ դենս, հասնես: Ինձ թվում է՝ լավ ընթերցողը երևում է դպրոցական տարիներից, սիրում է գիրքը, ազատ ժամանակը հատկացնում է միայն գիրք կարդալուն:

-Շնորհակալություն: Այո, ունենք ընթերցասեր երիտասարդներ, մասնավոր բանասերները շատ են գիրք ընթերցում: Ինձ կարծիքով գրքի դերն անփոխարինելի է, որքան էլ տեխնոլոգիաները զարգանան:

-Տեխնոլոգիաների զարգացման շրջանում, երբ կան առցանց, թվայնացված գրքեր, արդյո՞ք ընթերցողների թվի նվազում չի նկատվում:

-Որո՞նք են ուսանողների կողմից ամենից շատ ընթերցվող գրքերը:

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

մասնավոր բանասերները շատ են գիրք ընթերցում: Ինձ կարծիքով գրքի դերն անփոխարինելի է, որքան էլ տեխնոլոգիաները զարգանան:

-Որո՞նք են ուսանողների կողմից ամենից շատ ընթերցվող գրքերը:

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

-Քանի որ մեր գրադարանը գիտական է, մեծ մասամբ ձեռք ենք բերում գիտական - ուսումնական գրքեր: Միջոցները տրամադրում է մայր բուհը, նվիրում են անհատ հեղինակները, ուսումնական հաստատություններ: Գրքային ֆոնդում կա մոտավորապես 75000 միավոր գիրք:

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

-Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս դառնալ լավ ընթերցող:

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

Ընթերցողների թիվը չի նվազում, որովհետև ոչ բոլոր գրքերն են թվայնացված, որ կարողանան էլեկտրոնային ձևով ընթերցել: Էլեկտրոնային ընթերցումը ևս ունի իր բացասական կողմը՝ վնասակար է առողջության համար, մասնավոր երեխաներին պետք է հեռու պահել այդ եղանակով կարդալուց: Իր հետ կրելու տեսակետից թվայնացված գրքեր ունենալը հեշտ է, թեկուզ կարող ես միլիոնավոր գիրք ունենալ մոտո, կարծում եմ, պետք է գիրքը շոշափել, ունենալ ձեռքիդ տակ, ինչպես ասում են մեր գրքասեր բարեկամները, պետք է զգալ գրքի հոտը: Դասագրքերի առումով թվայնացվածից հեշտ է օգտվելը, եթե մի թեմա պետք է սովորի ուսանողը, վայրկյանների ընթացքում տվյալ գիրքը հնարավոր է փոխանցել իրար: Երկու եղանակից էլ օգտվում են, գիրքը, գրադարանը միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Ընթերցողների թվաքանակը տարեցտարի ավելանում է: Դասամիջոցներին չենք հասցնում սպասարկել ուսանողներին, այդ իսկ

պատճառով հայտերը թողնում են, գնում դասի, հետո գալիս են վերցնում: Սեպտեմբեր ամսվա ընթացքում մոտ 180 ուսանողի գրանցել ենք որպես նոր ընթերցող:

-Որո՞նք են գրադարանի նոր գրքերը:

Նոր դասագրքեր շատ ենք ստացել տնտեսագիտական ուղղվածությամբ, ունենք նոր գրքեր, որոնք ստեղծում ցուցադրված են, և ովքեր հաճախում են գրադարան, ծանոթանում են գրականությանը, վերցնում:


-Ի՞նչ միջոցներ եք ձեռնարկում ընթերցող - գրադարան կապը սերտացնելու, ընթերցանությունը ուսանողների համար գրավիչ դարձնելու համար:

Միջավայրը մեծ նշանակություն ունի, գրադարանը գրավիչ է իր գրքերով և, իհարկե, պայմաններով: Տարիներ շարունակ ձմռանը մեր գրադարանի ընթերցասրահը ցուրտ էր լինում, հույս ունենք, որ շենքի վերանորոգումից հետո կունենանք գրադարանային լավ պայմաններ: Եվ, իհարկե, գրադարանավարը պետք է ընթերցողին սպասարկի համբերատարությամբ, սիրալիք վերաբերմունքով: Պետք է նաև ուսանողին, մասնավոր առաջին կուրսեցիներին, ցույց տա գիրք փնտրելու հեշտ եղանակը:

Հարցազրույցը՝ Վարդուհի Գասպարյանի, լրագրություն 4-րդ կուրս

ԱՐՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՄԱՍՆԱՆ (ՈՒԳՎ) ԲԱԺԻՆ

Ընթացիկ ուսումնական տարվանից, ի թիվս կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ԱրՊՀ-ում գործում է նաև ուսումնական գործընթացի վերահսկման (ՈւԳՎ) բաժինը, որի ստեղծման նախադրյալների, խնդիրների, նպատակների և անելիքների մասին զրուցել ենք բաժնի պատասխանատու Գոհար Գասպարյանի հետ:



- Տիկի՛ն Գասպարյան, ուսումնական գործընթացի վերահսկումը համալսարանական գործունեության առանցքային ուղղություններից է եղել և, ըստ էության, նորություն չէ: Սակայն ուսումնական տարեսկզբից բաժինը հանդես է գալիս ինքնուրույն ստորաբաժանման կարգավիճակով: Ինչո՞վ է պայմանավորված այսպիսի մոտեցումը:

Վերահսկողական որոշակի պարտականություններով բաժնի՝ առանձին ստորաբաժանման կարգավիճակը պայմանավորված է առաջին հերթին հավատարմագրման պահանջով: Մյուս կողմից՝ այս կարգավիճակում առավել մասնավորեցված են առաջադրվող խնդիրներն ու պարտականությունները, որն առավելապես առնչվում է ուսումնական գործընթացի ներքին աուդիտի իրականացմանը:

- Ինչպիսի՞ գործառնություններ է ստանձնել ՈւԳՎ բաժինը և այդպիսով ի՞նչ խնդիրներ պետք է լուծի:

Բաժնին վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացվելու են ուսումնական գործընթացի ժամանակացույցի, ուսումնական բեռնվածությունների բաշխման և կատարման, ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների, նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացների իրականացման, դեկանատներում և ամբիոններում գործավարության վիճակի, ուսանողների առաջադիմության ցուցանիշների հաշվարկման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառման, ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարման գործընթացների, ուսումնական պարապմունքների վերահսկողական, ուսանողների ամփոփիչ ատեստավորման, ընթացիկ և ամփոփիչ ստուգումների և առաջադիմության հաշվառման, վերլուծության և այլ աշխատանքներ, որոնք կարելի է դիտարկել իբրև որակի ապահովման արդյունավետ մեխանիզմներ:

- Երկամսյա կարծ գործունեության ընթացքում ինչպիսի՞ աշխատանքներ է հասցրել իրականացնել բաժինը:

Նախորդ երկու ամիսը կարելի է բնորոշել որպես ադապտացման շրջան: Սակայն այս ընթացքում բաժնի աշխատակիցների համատեղ ջանքերով իրականացրել ենք այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են ուսումնական բեռնվածության ստուգում, առաջին ընթացիկ ստուգումների նախապատրաստումը, կազմակերպումը և անցկացումը, զուգահեռաբար՝ ամենօրյա պարբերականությամբ նաև ուսումնական պարապմունքների վերահսկումը:

- Բաժնում առաջիկայում ինչպիսի՞ աշխատանքներ են նախատեսվում:

Նախատեսվող տարաբնույթ աշխատանքներից առաջնային ենք համարում կրեդիտային ուսուցման համակարգում առաջարկվող փոփոխություններն ու դրանց արդյունքում ի հայտ եկած անելիքների արդյունավետ իրականացումը, ըստ որի որոշակիորեն փոխադրության է ենթարկվելու ուսումնական գործընթացի ստուգման փուլը: Այս փոփոխությունները կազմակերպական աշխատանքներ են ենթադրում, որոնք ներկայումս նախապատրաստական փուլում են: Կրեդիտային համակարգով առկա ուսուցմանը ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի համաձայն՝ ներկայումս համակարգչային թեստային ստուգումների օրերին համապատասխան խմբի ուսանողները չեն հաճախում պարապմունքների, ինչը ուսումնական օրացույցում տեղաշարժերի պատճառ է դառնում: Այս և այլ կարգի խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է վերանայել վերոհիշյալ կարգը՝ ապահովելով և՛ պարապմունքների, և՛ ստուգումների բնականոն ընթացքը:

ԱՅՍՕՐ ՈՒՍԱՆՈՂԻ ՁԱՅՆԸ ԼՍԵԼԻ Է. ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ, ԻՆՉԸ ՍՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ Է

Ընթացիկ ուսումնական տարվանից ԱրՊՅ-ում գործում է կառուցվածքային նոր ստորաբաժանում՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժին, որն այսուհետ համակարգելու է նաև շրջանավարտների և գործատուների



կայի պահանջներից, մյուս կողմից՝ ուսումնասիրել աշխատաշուկան և ձևակերպել առաջնահերթություններ:

-Այս առումով, կարծում ենք, տեղին է անդրադառնալ նաև բուհի և նրա շրջանավարտի մրցունակության բարձրացմանը միտված միջոցառումներին:

որ բաժինը իր բոլոր նախաձեռնությունների հիմքում դնում է ուսանողության զարգացումը, ներգրավում նրանց տարաբնույթ միջոցառումներում, ծրագրերում, հասարակական աշխատանքներում: Միաժամանակ պետք է նշել, որ այսօր ուսանողի ծայրը լսելի է, նրա կողմից բարձրացված խնդիրն ու առաջադրված հարցերը ղեկավարության ուշադրության կենտրոնում են, ինչը, կարծում ենք, մոտիվացիայի լավագույն աղբյուրներից է:

-Բաժինը զբաղվում է նաև կարիերայի հարցերով: Բուհ-գործատու գործակցության ուղղությամբ ի՞նչ անելիքներ եք տեսնում և ինչպիսի՞ միջոցառումներ եք նախատեսում:

-Կարիերայի ուղղությամբ տարվող աշխատանքները մի քանի ուղղություն են ենթադրում: Առաջին հերթին խնդիր ունենք ձևավորելու ԱրՊՅ ուսանողների և շրջանավարտների անձնական տվյալների էլեկտրոնային բազա, որի հիման վրա կձևակերպվեն մեր առաջնահերթությունները: Հաջորդիվ նախապատրաստական աշխատանքներ պետք է իրականացնել թե՛ աշխատանք փնտրողների, թե՛ աշխատանք առաջարկողների շրջանում: Մի կողմից շրջանավարտների կարողություններն ու հմտությունները պետք է համապատասխանեցնել աշխատաշու-

կայի պահանջներից, մյուս կողմից՝ ուսումնասիրել աշխատաշուկան և ձևակերպել առաջնահերթություններ: Վարկեր ենք փնտրում ոչ ֆորմալ ձևաչափով տեսական և գործնական դասընթացների կազմակերպումը առանձին խմբերի համար՝ ընդգրկելով տեղի և դրսի փորձառու մասնագետներին: Այս մեթոդը հնարավորություն կտա թողարկելու համակողմանիորեն պատրաստված մասնագետներ, որոնք պահանջարկ կունենան աշխատաշուկայում՝ այդպիսով նպաստելով բուհի վարկանիշի բարձրացմանը:

-Ի՞նչպես եք ապահովելու գործատու-շրջանավարտ կապը:

-Մենք, ըստ էության, կապող օղակ ենք հանդիսանալու շրջանավարտի ու գործատուի միջև և պարտավորվում ենք ինքներս ապահովելու այդ կապը՝ հնարավոր բոլոր խողովակներով: Առաջին քայլն արդեն արված է. բաժինը ֆեյսբուքյան էջ ունի, որի միջոցով հանրությունն իրազեկվելու է: Նշենք, որ համալսարանի ղեկավարությունը գործատուների հետ պաշտոնական համագործակցության քայլեր է ձեռնարկում և, օգտվելով առիթից, կցանկանայի կոչ անել պետական և մասնավոր հատվածին՝ առավելագույնս աջակցելու այս աշխատանքներին:

ԱՐՊՅ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒՆԻ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱԿԱՆ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿ



Արդեն մեկ տարի է Արցախի պետական համալսարանում գործում է հոգեբանական կենտրոնը: Կենտրոնի իրականացրած գործունեության և անելիքների մասին Լիդիա Սահակյանը զրուցել է տնօրեն Անահիտ Գասպարյանի հետ:

-Տիկին՝ Գասպարյան, նորաստեղծ հոգեբանական կենտրոնն ի՞նչ առանցքային գործառույթ է իրականացնում:

-Արդեն մեկ տարի է, ինչ գործում է ԱրՊՅ հոգեբանական կենտրոնը: Մեր հոգեբանական կենտրոնն ունի հնարավորություն՝ առաջարկելու ծառայությունների բավական լայն շրջանակ: Կենտրոնը սերտորեն համագործակցում է ԱրՊՅ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի, այլ ստորաբաժանումների հետ՝ համատեղ անցկացնելով տեսական, ուսումնական և պրակտիկ աշխատանքներ, ուսումնասիրություններ, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետազոտություններ, հարցումներ, դրանց վերլուծություններ, կազմակերպում է փորձուսուցումներ, այդ թվում՝ գիտամանկավարժական և այլ պրակտիկ ու գիտատեսական աշխատանքներ: Կենտրոնը համագործակցում է ՀՀ-ում գործող համապատասխան ուղղվածություն ունեցող այլ կենտրոնների հետ: Հատկապես սերտորեն համագործակցում ենք «Ապագա» հոգեբանական կենտրոնի հետ:

-Կենտրոնի ծառայություններից օգտվողների համար կա՞ տարիքային սահմանափակում: Տարիքային ո՞ր կատեգորիայի անձինք են դիմում Ձեր օգնությանը: Քանի՞ այցելու եք ունեցել մինչ օրս:

-Դեռևս մեզ հայերիս մոտ չի ստեղծվել հոգեբանական ծառայություններից օգտվելու մշակույթ, և այդ ուղղությամբ պետք է լուրջ աշխատանք կատարենք: Անհատական խորհրդատվությունների համար ԱրՊՅ հոգեբանական կենտրոն դիմելու համար տարիքային սահմանափակում չկա, բայց մեզ հիմնականում դիմում են երեխաներն ու երիտասարդները: Անհատական խորհրդատվությունները կազմակերպվում է վճարովի համակարգով, բայց շատ մատչելի: 2018թ. փետրվարի 1-ից մինչև հիմա ունեցել ենք երեք տասնյակ այցելու:

-Կպատմե՞ք կենտրոնում գործող նախալրթարանի մասին: Ինչպե՞ս են անցկացվում պարապմունքները, ի՞նչ խնդիրների եք առնչվում երեխաների հետ աշխատելիս, և ինչպիսի՞ մասնագետների օգնությամբ եք հաղթահարում դրանք:

-Նախալրթարանական տարիքի երեխաների համար կենտրոնում գործում է նախակրթարան, որտեղ հա-

տուկ զարգացնող պարապմունքների միջոցով ապահովվում է մտածողության, հիշողության, խոսքի, ուշադրության, ստեղծագործական ունակությունների զարգացումն ու նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը: Կենտրոնի լոգոպեդի կողմից մասնագիտական աջակցություն է ցուցաբերվում խոսքի հետ կապված դժվարություններ ունեցող երեխաներին: Նախակրթարանի աշխատանքներում ներգրավված են մագիստրանտներ և ուսանողներ: Մենք գործ ունենք տարբեր տարիքային խմբերի երեխաների հետ, և պետք է յուրաքանչյուրին անհատական մոտեցում ցուցաբերել, քանի որ ամեն մի երեխա ունի իր խառնվածքն ու հետաքրքրությունները: Կարևոր է մանկական հոգեբանությանը առաջնորդվելը, այսինքն՝ մանկան լեզվով բացատրել, որ իրենց հասկանալի լինի: Ոչինչ չի պարտադրվում երեխային: Եթե երեխան խաղալ է ուզում, պետք է խաղա, քանի որ խաղի միջոցով ինքը կարող է ուղղորդել՝ ինչպես աշխատել իր հետ: Խաղի միջոցով կարելի է նաև սովորեցնել:

Հոգեբանական մոտեցումներով կատարում ենք ստեղծագործական աշխատանքներ, որոնց միջոցով զարգացնում ենք երեխայի միտքը, երևակայությունը, մոտորիկան: Մեր կենտրոնի հոգեբանի և հատուկ մանկավարժի կողմից իրականացվում են շտկողական, վերականգնողական աշխատանքներ՝ հիպերակտիվության, ուշադրության պակասի, ագրեսիվ դրսևորումների, տագնապայնության, մանկական վախերի, մանկական ներոզների և այլ բնույթի խնդիրներով: Նախակրթարանի աշխատանքը սկսվում է ժամը 14.00-ից և տևում մինչև 17.00-ն:

-Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում առաջիկայում:

-Առաջիկայում նախատեսում ենք մանկավարժա-հոգեբանական աջակցություն ցուցաբերել Շուշի քաղաքի «Շող» երեխաների համայնքահեն կենտրոնին: Այստեղ երեխաները տարբեր պատճառներով «դժվար դաստիարակվող» են, սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, ունեն առողջական խնդիրներ, զարգացման հապաղումներ: Մյուս երեխաների մասն նրանք էլ որակյալ կրթության, սիրո, հոգատարության, ուշադրության, խնամքի կարիք ունեն: «ՇՈՂ» կենտրոնի մանկավարժներն ամեն ինչ անում են՝ երեխաների խնդիրները լուծելու համար, սակայն ուժերը չեն բավականացնում, և ունեն մասնագիտական օգնության ու աջակցության կարիք: Նրանց հնարավորությունները չեն հերիքում հոգեբանական խնդիրների լուծման համար, և անհրաժեշտ է լինում հոգեբան-մասնագետի միջամտություն: Հաճախ անհրաժեշտություն կառաջանա նաև խմբային աշխատանքը փոխարինել անհատական աշխատանքով, որի համար զբաղի թվով կամավորականներ են անհրաժեշտ:

Մեր կենտրոնի գործունեության շրջանակներում ձևավորել ենք հոգեբան-մագիստրանտների, ուսանողների, մանկավարժ-մագիստրանտների, ուսանողների կամավոր խումբ, որի անդամները պատրաստ են իրենց աջակցությունը ցուցաբերել «Շող» երեխաների համայնքահեն կենտրոնի հոգեբանական, մանկավարժական, տարաբնույթ խնդիրներ ունեցող երեխաներին: Նախատեսում ենք նաև 1-ին կուրսի ուսանողների մոտ հարցում անցկացնել ուսումնական գործունեության մոտիվացիայի մակարդակը որոշելու նպատակով:

Հարցազրույցը՝ Լիդիա ՍԱՅՎԱԿՅԱՆԻ, Լրագրություն 4-րդ կուրս